

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և
ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2016թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱՆԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզի բնակչության բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է մարզային ենթակայության 3 հիվանդանոցների 5 առողջության պահպանման կենտրոնների միջոցով: Պոլիկլինիկական և առողջության կենտրոնների հիմնական նպատակը հիվանդությունների վաղ հայտնաբերման և բուժման սկզբունքն է կցագրված բնակչության համապատասխան տարիքային սկրինգների միջոցով:

2016թ. գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար նախատեսված է **610 565.3 հազ . դրամ** գումար:

Մարզի հիվանդանոցային բժշկական օգնություն իրականացնող ընկերություններում կատարվել են 19752.8 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որից 2625.0 հազ. դրամը համավճարի հիմունքներով:

Մարզպետի կողմից պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել մարզի 25 քաղաքացիներ, որից 3-ը մարզի բուժհաստատություններ: Ապահովվել է հատուկ հիվանդություններով տառապող անձանց անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրումը, ինչպես նաև սոցիալական խմբերում ընդգրկված անձանց անվճար բուժ.ծառայություններ են մատուցվել մարզի բնակչությանը:

Մարզում իմունականխարգելման աշխատաքները պատվաստման տարբեր տեսակների գծով ընդգրկվածությունը կազմում է 95%:

2016թ. «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ում սկսել է գործել հեմոդիալիզի բաժանմունքը, որը սպասարկում է մարզի 6 բնակչի:

2016թ. հունիսի 13-ից 25-ը իրականացվել է Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) և Ucom ընկերության կողմից համատեղ իրականացվող «Լույս հայի աչքերին» 2016 թվականի ծրագիրը: Մարզի բուժհաստատությունների ակնաբույժների կողմից 2016թ.-ին իրականացվել են շուրջ 1000 մեծահասակի և 810 երեխայի ակնային զննում: Ակնային զննում անցածներից 133-ը ծրագրի շրջանակում ենթարկվել են վիրահատության, իսկ 38-ը՝ լազերային միջամտության: ՀՀ

Վայոց ձորի մարզպետի միջամտությամբ ծրագրի շրջանակում վիրահատության են ենթարկվել նաև մարզի սոցիալապես անապահով ընտանիքների 15 բնակիչ:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 38 մեծահասակ և 3 երեխա

Կիսամյակում ծնունդների թիվը կազմում է

	2015թ.	2016թ.	
• ԶԱԳՍ-ի տվյալներով	259	297 այդ թվում՝	+38
• Եղեգնաձոր	117	191	
• Վայք	55	87	
• Զերմուկ	27	19	
5.Մահերի թիվը մարզում ԶԱԳՍ-ի տվյալներով	272	273, այդ թվում՝	+1
Եղեգնաձոր	179	187	
Վայք	67	55	
Զերմուկ	26	31	

Առողջապահության և սցիալական ապահովության

վարչության պետ

Խ.Գևորգյան

01.07.2016թ.